ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«26» ապրիլի 2018 թ. № 169-Հ

ՀՐԱՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 397-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 759-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպման և անցկացման համար պատասխանատու ստորաբաժանումներ (այսուհետ՝ Ստորաբաժանումներ) սահմանել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության և պետական գնումների գործընթացի համակարգման վարչությունները:

2. Հաստատել քննության կազմակերպման և անցկացման համար պատասխանատու ստորաբաժանումների՝

1) աշխատողների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի.

2) աշխատողների գործունեության կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի օգոստոսի 3-ի «Գնումների համակարգողի որակավորման շնորհման

քննություն կազմակերպող և անցկացնող հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմն ու գործունեության կարգը հաստատելու մասին» N 397-Ա հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված 1

ՀՀ ֆինանսների նախարարի

2018թ. մարտի 26-ի N 169 -Ա հրամանի

ՑԱՆԿ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

Արթուր Բաղդասարյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնումների գործընթացի համակարգման բաժնի պետ (խմբի ղեկավար).

Հեղինե Ջաղինյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ.

Ինեսա Քոչարյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնումների գործընթացի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

Հավելված 2
ՀՀ ֆինանսների նախարարի
2018թ. մայիսի 26-ի N 169-Ա հրամանի

ԿԱՐԳ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության (այսուհետ՝ քննություն) կազմակերպման և անցկացման համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների (այսուհետ՝ աշխատողներ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2. Քննության կազմակերպման և անցկացման հետ կապված աշխատանքներն աշխատողներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հունիսի 29-ի «Գնումների համակարգողների որակավորման շնորհման և նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 99-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 759-Ն որոշմամբ հաստատված կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանված պայմաններով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

3. Խմբի ղեկավարն իրականացնում է ընթացիկ հսկողություն Աշխատողների գործունեության նկատմամբ և վերջիններիս հետ ստորագրում է Կարգի 16-րդ և 18-րդ կետերով սահմանված արձանագրությունը:

4. Խմբի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է ըստ խմբում ընդգրկման առաջնահերթության խմբի ղեկավարից հետո նշված՝ գործընթացին ներկա հաջորդ աշխատողը:

5. Քննության անցկացմանը պարտադիր կերպով մասնակցում են Ստորաբաժանումների առնվազն երկու աշխատող, հակառակ դեպքում քննության անցկացումը հետաձգվում է, և մինչև հաջորդող աշխատանքային օրը տեղեկագրում տեղեկություն է հրապարակվում վերջինիս անցկացման նոր ժամկետի մասին: